

«ՅՈՒԲՈՄ» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, 0025  
Սայաթ-Նովա 40/1  
Հեռ. (+374) 11 44 44-44  
Ֆաքս (+374) 60 44-44-41  
Էլ. փոստ՝ info@ucom.am  
Վեբ կայք՝ www.ucom.am

“UCOM” LLC  
40 I Sayat-Nova Ave  
Yerevan 0025, Armenia  
Phone: (+374) 11 44 44 44  
Fax: (+374) 60 44 44 41  
E-mail: info@ucom.am  
Web: www.ucom.am

0171040

## Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագիր N/30/06/2016

ք. Երևան

«30» հունիսի 2016թ.

«Յուբոմ» ՍՊԸ Ընկերությունը, ի դեմս ընկերության փոխտնօրեն/կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «ՀՀ Տարածրային կառավարման և զարգացման նախարարությունը», ի դեմս աշխատակազմի ղեկավար Մասիս Բաղդասարյանի այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր»՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություն» կամ «Ծառայություններ»), որոնց նկարագրության, քանակի և սակագնային փաթեթների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում և/կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքում ([www.ucom.am](http://www.ucom.am)), իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել Ծառայությունների համար՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

### 2. Ծառայությունների մատուցման հիմնական պայմանները

- 2.1. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները պատշաճ կերպով ստանալու համար Պայմանագիրը ստորագրելուց հետո անհրաժեշտության դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում Սարք:
- 2.2. Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց միջոցով Օպերատորը մատուցում է իր Ծառայությունները:
- 2.3. Օպերատորի կողմից Սարքը տեղադրելուց, կարգաբերելուց և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է Սարքի հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:
- 2.4. Բաժանորդն ընդունում է, որ Սարքը համարվում է Օպերատորի կողմից պատշաճ կերպով տեղադրված, կարգաբերված և իրեն հանձնված Օպերատորի կողմից Բաժանորդին Պայմանագրով նախատեսված Ծառայությունները փաստացի մատուցելու պահից:
- 2.5. Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը, ինչպես նաև Օպերատորի կողմից դրանց վրա կատարված ցանկացած փոփոխություն և կամ վերանորոգման արդյունք, եթե այլ բան զրավոր կերպով նախատեսված չէ Կողմերի միջև,

է

համարվում են Օպերատորի սեփականությունը:

- 2.6. Բաժանորդը չի կարող իրեն տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վճարովի կամ անհատույց հիմունքներով փոխանցել, վարձակալությամբ տրամադրել երրորդ անձի կամ որևէ փոփոխության ենթարկել: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վերադարձվում են Օպերատորին:
- 2.7. Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել իր կողմից Սարքի անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերանորոգման, Սարքի վրա տեղադրված հոլոգրաֆիկ տարրերանշանի կանխամտածված ջնջման, փոփոխման կամ այլ կերպ վնասման հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասները:
- 2.8. Մարքերի տեղադրման, կարգաբերման, Բաժանորդին հանձնման, սպասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է Օպերատորի աշխատակիցներին:
- 2.9. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրվող մալուխով, Բաժանորդը պատասխանատու է Ծառայության մատուցման հասցեում մալուխի անցկացման և վերջինիս անցկացման համար անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերման համար:
- 2.10. Ծառայությունների մատուցման նպատակով Օպերատորի կողմից իրականացվող համակցման աշխատանքների արժեքը այդ աշխատանքների ընթացքում օգտագործված օպտիկական մալուխի յուրաքանչյուր մեկ մետրի համար կազմում է 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ, իսկ օգտագործված ներքին լարանցման մալուխի (UTP) յուրաքանչյուր մեկ մետրի համար՝ 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ սկսած օգտագործված օպտիկական մալուխի և/կամ ներքին լարանցման մալուխի (UTP) 51 (հիսունմեկ) մետրից: Բաժանորդը պարտավորվում է վճարել սույն կետի համաձայն իրականացված համակցման աշխատանքների դիմաց Օպերատորի կողմից ներկայացված հարկային հաշիվը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.11. Կողմերը սույնով ընդունում և համաձայնվում են, որ համակցման աշխատանքներից առաջ կատարված չափազրման ժամանակ հաշվված մալուխների երկարությունը կարող է տարբերվել համակցման աշխատանքների ընթացքում փաստացի օգտագործված մալուխների երկարությունից, ուստի համակցման աշխատանքների դիմաց վճարելու ժամանակ հիմք է ընդունվում ոչ թե չափազրման ժամանակ հաշվված մալուխների երկարությունը, այլ Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված՝ փաստացի օգտագործված մալուխների երկարությունը:
- 2.12. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրով մատուցվող Ծառայություններից օգտվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:
- 2.13. Ֆիրմաված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը:
- 2.14. Պայմանագրի 2.13. կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

### *3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները*

#### **3.1. Օպերատորն իրավունք ունի՝**

- 3.1.1. Բաժանորդից պահանջել ժամանակին վճարելու Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց,
- 3.1.2. Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն

ու Սարքը,

3.1.3. մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից Պայմանագրի 5.1. կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ամսական վճարի 0,05 տոկոս անբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով և/կամ ժամանակավորապես դադարեցնել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը՝ մինչև գոյացած պարտքի ամբողջական մարումը,

3.1.4. դադարեցնել Ծառայությունների մատուցումը և լուծել Պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից ինտերնետ մուտքի հնարավորությունը ինտերնետի մյուս տերմինալների կամ բաժանորդների նկատմամբ վնասակար գործողությունների իրականացման նպատակով օգտագործելու ինտերնետ ցանցի էթիկայի կանոններին հակասող գործողություններ իրականացնելու դեպքում ինչպիսիք են SPAM-ի (անանուն, անցանկալի հաղորդագրությունների) ուղարկումը, հակաօրենսդրական գործողություններ խրախուսող նյութերի տարածումը, ցանցում գտնվող համակարգիչների նկատմամբ ծրագրային կամ ապարատային ոտնձգությունները (հակերությունը):

### 3.2. Օպերատորը պարտավոր է՝

3.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

3.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդին տրամադրել Սարքը և/կամ Ծառայության մատուցման հասցե(ներ)ում տեղադրել և կարգաբերել Սարքն ու միացնել Բաժանորդին իր հեռահաղորդակցության ցանցին,

3.2.3. ողջամիտ ժամկետում անհատույց իրականացնել Սարքի վերանորոգման աշխատանքները և վերացնել Սարքի ի հայտ եկած արտադրական սխալներն ու անսարքությունները՝ Սարքի արտադրական խտտանի դեպքում և/կամ եթե Սարքի սխալներն ու անսարքությունները չեն առաջացել Բաժանորդի կողմից Սարքի սխալ և/կամ ոչ պատշաճ օգտագործման հետևանքով,

3.2.4. սակագների փոփոխությունների մասին Բաժանորդին տեղյակ պահել նոր սակագների կիրառումից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

### 3.3. Բաժանորդն իրավունք ունի՝

3.3.1. պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայությունները, եթե Ծառայությունների տրամադրման ընթացքում ի հայտ չեն եկել անյուժեյի տեխնիկական խնդիրներ,

3.3.2. պահանջել Օպերատորից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայություններից ճիշտ և անվտանգ օգտվելու համար:

### 3.4. Բաժանորդը պարտավոր է՝

3.4.1. ժամանակին և Պայմանագրով սահմանված կարգով վճարել փաստացի մատուցված Ծառայությունների համար Պայմանագրի հավելված(ներ)ով նախատեսված վճարը, անգամ եթե Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող տեխնիկական կամ այլ պատճառների հետևանքով Բաժանորդը չի օգտվել Ծառայություններից կամ եթե վերջինս չի կարողացել կարգաբերել սեփական ցանցը և ապահովել Ծառայությունների որակյալ ընդունումը:

## 4. Ծառայությունների մատուցման կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը

4.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս նախապես ծանուցելու, եթե Բաժանորդը՝

4.1.1. օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,

- 4.1.2. իսախտել է Պայմանագրի պայմանները կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջները:
- 4.2. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող ծառայությունները 10 (տասը) օրից մինչև 2 (երկու) ամիս ժամկետով՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմում և ամբողջությամբ վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված ծառայությունների դիմաց:
- 4.3. Բաժանորդի կողմից դիմումում նշված ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնելու/դադարեցնելու ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են: Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող ծառայություններն ավելի բան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը՝ կատարելով համապատասխան վճարումներ, եթե այդպիսիք սահմանված են Օպերատորի կողմից, այդ թվում՝ վճարային պարտքը, տույժերը, Օպերատորի կողմից կատարված աշխատանքների և այլ փաստացի կատարված ծախսերի դիմաց վճարները:
- 4.4. Եթե Բաժանորդն օգտվում է Օպերատորի կողմից մատուցվող Է-ից (մեկից) ավելի ծառայություններից, ապա այդ ծառայություններից որևէ մեկի համար Պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի ծառայությունների մատուցման կասեցումը կամ սահմանափակումը կիրառել Բաժանորդին մատուցվող մյուս բոլոր ծառայությունների նկատմամբ:

### 5. Ծառայությունների գինը և վճարման կարգը

- 5.1. Բաժանորդը Պայմանագրով սահմանված ծառայությունների համար վճարում է Օպերատորի կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա ծառայությունների մատուցման յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո առավելագույնը 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:
- 5.2. Բաժանորդի կողմից Պայմանագրով սահմանված ծառայությունների համար վճարումը համարվում է կատարված Օպերատորի կողմից Բաժանորդին ներկայացված հարկային հաշվում նշված Օպերատորի բանկային հաշվեհամարին վճարումը (գումարը) մուտք լինելու պահից:
- 5.3. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի գանգի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների բնույթից կախված ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության բարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 16 (տասնվեց) ժամը: Ամսական այդ թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամանակահատվածի համար կատարվում է Ծառայության ամսական վճարի նվազեցում, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{B \times C}{D}$$

Որտեղ՝

A - Ծառայությունների ամսական վճարից նվազեցվող գումար

B - Ծառայությունների ամսական արժեք

C - Ամսական թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամերի քանակ

D - Միջին ամսական ժամերի քանակ, որը հավասար է 729.6 (30.4 /միջին ամսական օրերի թիվ/ x 24 /1 օրվա ժամերի քանակ/):

5.4. Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված վճարներից բացի, հեռուստատեսային և ֆիբրաված հեռախոսակապի առանձին ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդից կարող են գանձվել հավելյալ վճարներ՝ Օպերատորի վեբ կայքում տեղադրված և Օպերատորի սպասարկման գրասենյակներում ներկայացված պայմաններին և սակագներին համապատասխան:

5.5. Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված ֆիբրաված հեռախոսակապի ծառայության վճարը

համարվում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Բաժանորդից՝ անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

- 6.1. Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը Բաժանորդի հանդեպ չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:
- 6.2. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի լուծման դեպքում (անկախ լուծման պատճառներից) Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը 15 (տասնհինգ) օրվա ընթացքում սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը) վերադարձնել Օպերատորին կամ հնարավորություն ստեղծել Օպերատորի մասնագետների համար ապամոնտաժելու դրանք:
- 6.3. Պայմանագրի 6.2. կետով նախատեսված ժամկետում Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերն Օպերատորին չվերադարձնելու կամ դրանց ապամոնտաժման հնարավորություն չստեղծելու կամ նման հնարավորությունը սահմանափակելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է 5 (հինգ) օրվա ընթացքում Օպերատորին վճարել Սարքի համաձայն ընդունման ակտի մեջ նշված Սարքի, մալուխի, դրանց պատկանելիքների ու մասերի արժեքը, որոնցից նվազեցվում է բնական մաշվածության համար հաշվարկվող գումարը:
- 6.4. Պայմանագրի 6.3. կետում նշված ժամկետում Սարքի, մալուխի, դրանց պատկանելիքների ու մասերի արժեքը չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարման ներթակա գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 6.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.
  - 6.5.1. դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների մեջ կատարված փոփոխությունների համար,
  - 6.5.2. Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների պատշաճ չընդունման կամ ընդհատման համար.
  - 6.5.3. աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 16 (տասնվեց) ժամը.
- 6.6. Ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման դեպքում Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված(ներ)ում նշված սակագնային փաթեթ(ներ)ի համար սահմանված արագությունները նախատեսված են Օպերատորի պաշտոնական վեբ կայքում նշված քանակով համակարգիչների միացման և օգտագործման համար: Մահմանված քանակից ավել համակարգիչներ ցանցին միացնելու և ինտերնետ հասանելիության ծառայությունից օգտվելու դեպքում Ծառայությունների ընդհատումների, խափանումների և արագության անկման համար Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում:
- 6.7. Օպերատորը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում իր ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված

տեղեկատվության և բովանդակության ճշտության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ:

- 6.8. Օպերատորը պատասխանատվություն չի կրում SPAM-ի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:
- 6.9. Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չկատարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:
- 6.10. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն րնդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:
- 6.11. Բաժանորդը պատասխանատու է Սարքի, ինչպես նաև Սարքն օգտագործելու համար հանձնման րնդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքախոյուժների, մալուխների, լարերի և այլ պարագաների համար և դրանց վնասման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է Օպերատորին փոխհատուցել դրանց արժեքը լրիվ ծավալով՝ պատճառված վնասին համամասնորեն:

### *7. Պայմանագրի գործողության ժամկետը*

- 7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս Կողմին Պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է 1 (մեկ) տարի ժամկետով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:
- 7.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Նախաձեռնող Կողմը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցում ուղարկել մյուս Կողմին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
- 7.3. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված(ներ)ում նշված մատուցվող Ծառայությունների հասցե(ներ)ի փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավորվում է առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցել Օպերատորին:
- 7.4. Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

### *8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)*

- 8.1. Պայմանագրով պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումներ, գործադուլներ, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սարսուժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:
- 8.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1. Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 9.2. Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի զաղտնի տեղեկատվության պահպանման համար և չիրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- 9.3. Պայմանագիրն ուժը չի կորցնում Կողմերի անվանման, գտնվելու վայրի, վավերապայմանների կազմակերպաիրավական ձևի, հիմնադիր փաստաթղթերի փոփոխության դեպքում:
- 9.4. Կողմերի՝ Պայմանագրում նշված անվանման, գտնվելու վայրի, վավերապայմանների (հասցե, բանկային հաշվեհամար և այլն) փոփոխության, վերակազմակերպման կամ լուծարման դեպքում Կողմը պարտավոր է այդ մասին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել մյուս Կողմին:
- 9.5. Պայմանագրի գործողության ընթացքում Օպերատորն իրավասու է Բաժանորդին ծանուցել և վերջինիս հետ տեղեկատվություն փոխանակել ինչպես Պայմանագրում նշված Բաժանորդի էլեկտրոնային փոստով, այնպես էլ Պայմանագրում նշված հասցեով վերջինիս գրություններ առաքելու և ստանալու միջոցով:
- 9.6. Օպերատորի կողմից Պայմանագրով նախատեսված հասցեով կամ էլեկտրոնային փոստով Բաժանորդին ծանուցելը համարվում է պատշաճ ծանուցում, եթե Բաժանորդը Օպերատորին գրավոր ձևով չի տեղեկացրել իր հասցեի կամ էլեկտրոնային փոստի փոփոխման վերաբերյալ նման փոփոխությունից հետո առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 9.7. Պայմանագրի շրջանակում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնություն ձևոր չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճերի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի բնությանը:
- 9.8. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:
- 9.9. Պայմանագրին կից հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:

10. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Օպերատոր



Բաժանորդ

«Յուրոմ» ՍՊԸ  
 Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4  
 Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1  
 Հեռ.՝ 374 11 444444  
 Ֆաքս՝ 374 60 444441  
 ՀՎՀՀ 00024873  
 «Լյու-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
 Հ/Հ 001-264993-001

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման  
 նախարարություն  
 Իրավ. հասցե՝ ք.Երևան, Կառավարության 3-րդ  
 շենք, 6-րդ հարկ  
 Գործ. հասցե՝ ք.Երևան, Կառավարության 3-րդ  
 շենք, 6-րդ հարկ  
 Հեռ.՝ 010511331  
 ՀՎՀՀ 02578338

Փոխստորեն/Կողմացին տնօրեն՝

Էլ. փոստ՝ a.azatyan@mta.gov.am



Ա.Բարսեղյան

Մ.Բաղդասարյան

*Handwritten signatures:*  
 Ասատուր Ա. Գրիգորյան  
 Զեյնա Ս. Նիբրանյան  
 Ար. Ն. Գևորգյան

**Ծառայության (Ծառայությունների) նկարագիրը, քանակը և սակագները**

ք. Երևան

«30» հունիսի 2016թ.

**1. Տրամադրվող Ծառայություններ**

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցե(ներ)
1	U!TV Full catch up corporate 2*9500	19000	ք.Երևան, Կառավարության 3-րդ շենք, 6-րդ հարկ
2	U!TV Select Corporate 5*2500	12500	ք.Երևան, Կառավարության 3-րդ շենք, 6-րդ հարկ

**2. Ծառայությունների սակագները**

2.1. Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 31500 ( Երեսուն մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

**Օպերատոր**



**Բաժանորդ**

«Յուրոմ» ՍՊԸ  
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տեղյան 19, բն.4  
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1  
Հեռ.՝ 374 11 444444  
Ֆաքս՝ 374 60 444441  
ՀՎՀՀ 00024873  
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Հ/Հ 001-264993-001

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն  
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Կառավարության 3-րդ շենք, 6-րդ հարկ  
Գործ. հասցե՝ ք.Երևան, Կառավարության 3-րդ շենք, 6-րդ հարկ  
Հեռ.՝ 010511331  
ՀՎՀՀ՝ 02578338  
Էլ. փոստ՝ a.azatyan@mta.gov.am

Փոխտնօրեն/Կոմպյուտերային տնօրեն՝

Աշխատակազմի ղեկավար՝

—  Ա. Բաբսեդյան  


 Ա. Բաղդասարյան  
